ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ապրիլի 2023 թվականի №-Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի №311Ա ԵՎ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի №288Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2007 թվականի հուլիսի 20-ի №311Ա որոշմամբ «ՄՏՔԻ ԲԱՆԱԼԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրվել է Վայոց ձորի մարզի Հերմոն և Աղավնաձոր համայնքների վարչական տարածքներում՝ Արփա գետի Եղեգիս վտակի ոռոգման №2 ջրատարի վրա, «ՌԻՆԴ» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0257 լիցենզիան (այսուհետ՝ ԼԷ №0257 լիցենզիա), որը Հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 31-ի №288Ա որոշմամբ վերաձևակերպվել է «ԷՐԻԷՄ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) անվամբ,

բ) Ընկերությունը, №0257 լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածում՝ մինչև 2023 թվականի մարտի 25-ը, չի ավարտել Կայանի կառուցման աշխատանքները և Հանձնաժողովի սահմանած կարգով չի դիմել №0257 լիցենզիայի պայմաններում փոփոխություններ կատարելու համար կամ №0257 լիցենզիայով սահմանած կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու հայտով,

գ) Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 2023 թվականի մարտի 27-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ «Էներգետիկայի մասին»

օրենքի 30.1 հոդվածի 2-րդ մասի «ա» և «բ» կետերի հիմքով №0257 լիցենզիայի գործողությունը դադարեցնելու հարցի քննարկման նպատակով, որի մասին Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2023 թվականի մարտի 27-ի №ԳԲ/34.1-Մ2-5/982-2022 գրությամբ,

դ) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը հայտնել է, որ Կայանի կառուցման համար կատարվել է մոտ 350 000 ԱՄՆ դոլարին համարժեք ներդրում, շենքը կառուցված է: Մոտ 150 000 դոլարին համարժեք ներդրում է անհրաժեշտ: Նախորդ վեց ամիսների ընթացքում շինարարական և կառուցապատման աշխատանքները ամբողջապես չի կատարվել՝ կապված վարկային միջոցների ստացման ձգձգման հետ: Կառուցման ժամանակահատվածի երկարաձգման հայտ չներկայացնելու պատճառը վարկային միջոցների ներգրավման ժամկետի շեղումներն են,

ե) «Էներգետիկայի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, ի թիվս այլնի, էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու դեպքում երաշխիքային գումարը Հանձնաժողովի սահմանած կարգով և չափով ենթակա է փոխանցման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

զ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի՝

- 3-րդ կետի համաձայն՝ երաշխիքով սահմանման ենթակա գումարի հաշվարկման բազա է համարվում «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված բազային տուրքի չափը: Երաշխիքով սահմանման ենթակա գումարի մեծությունը պետք է հավասար լինի կառուցվող կայանի, իսկ կայանի վերակառուցման դեպքում դրա արդյունքում ավելացող հաշվարկային (տեղակայվող) հզորության (արտահայտված կիլովատտերով) և «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված բազային տուրքի երկուսուկեսապատիկի արտադրյալին, սակայն ոչ պակաս, քան 500 000 դրամը,
- 6-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարն ամբողջությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե որոշում է ընդունել արտադրության լիցենզիայի գործողությունը դադարեցնելու մասին, բացառությամբ Կարգի 46.1-ին կետի համաձայն լիցենզիայի տրամադրման մասին որոշումն ուժը կորցրած ճանաչելու դեպքի,

է) իրականացված վարչական վարույթի արդյունքում փաստվել է, որ Ընկերությունը մինչև №0257 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի ավարտը՝ 2022 թվականի մարտի 25-ը չի ավարտել Կայանի կառուցման աշխատանքները, Հանձնաժողովի սահմանած կարգով չի դիմել №0257 լիցենզիայի պայմաններում փոփոխություններ կատարելու համար կամ №0257 լիցենզիայով սահմանած կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու հայտով, ինչը «Էներգետիկայի մասին» օրենքի 30.1 հոդվածի 2-րդ մասի «ա» և «բ» կետերի համաձայն լիցենզիայի դադարեցման հիմք է, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասը, 30.1 հոդվածի 2-րդ մասի «ա» և «բ» կետերը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի 2007 թվականի հուլիսի 20-ի «ԷՐԻԷՄ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «ՌԻՆԴ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №311Ա և Հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 31-ի «ՄՏՔԻ ԲԱՆԱԼԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության №0257 լիցենզիան վերաձևակերպելու մասին» որոշումները:
2. Պարտավորեցնել Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնհինգօրյա ժամկետում «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2022 թվականի նոյեմբերի 3-ի №652-9957 գրությամբ Հանձնաժողով ներկայացված ՀԲԵՆ22/349-01 երաշխիքի համաձայն երաշխավորված 5,080,000 (հինգ միլիոն ութսուն հազար) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքի:

4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- ապրիլի 2023թ.